



ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆՅԱՆ

(Գիտական աշխատակից
Գորեգին Կաքողիկոսի)

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ¹



Եծ է Գարեգին Կաթողիկոսի բանասիրական վաստակը: Բազմատարր է Գարեգին Կաթողիկոսի բանասիրական բերքը:

Անիկա ավելի քան 60 տարիներ ստեղծադրեց բանասիրական աշխատություններ, որոնք լի են նորությամբ, հմտությամբ և կառուցմամբ:

Իր գործերուն գիխավոր և թերևս ամեննեն արժեքավոր նկարագիրն է կառուցողականությունը: Իր բանասիրության ավագ նպատակն է մեր անցյալի և մշակույթի կալվածին մեջ էական պակաս մը լրացնել, դատարկություն մը լեցնել և կամ անձտություններ ուղղել: Անիկա անկոխ գետիններու բանասերն է:

Այդ իսկ պատճառով իր ուսումնասիրությանց առարկաները, ծանոթ դեմքերը, դեպքերն ու երեսուցիները չեն: Ոչ միայն իր ուսումնասիրությանց առարկաները, այլև անոնց մատոցման համար հայթայթված նյութերը, փաստերն ու վկայությունները նորություններ են, ցարդ ծանոթ աղբյուրներու, այսինքն հրատարակված պատմիչներու, և արձանագրություններու հիմամբ միայն ուսումնասիրությունները չեն գրած: Անիկա գիշած է նոր աղբյուրներու, որոնք մինչև այդ ժամանակ մատչելի չեն եղած դրեթե ոչ ոքի:

Ամեննեն ավելի իրմուլ կսկսի Հայոց պատմության և մշակույթի զանազան երեսուցիներուն ու ճյուղերուն ուսումնասիրության համար օգտագործումը ձեռագիրներու հիշատակարաններուն և վիմական արձանագրություններուն: Որպեսզի սխալ չհասկցվինք՝ հայտնենք որ իրմե առաջ եղած են բանա-

սերներ, որ օգտագործած են ձեռագրական հիշատակարաններն ու վիմական արձանագրությունները. բայց Գարեգին Կաթողիկոս եղած է առաջին բանասերը, որ գրեթե գրիխագորաբար ձեռագրաց հիշատակարաններու և վիմական արձանագրություններու ատաղձովը ուսումնասիրած է դեմքեր, նախարարական տուններու պատմություններ և հայ մշակույթի զանազան երեսուցիներ:

Պատճառ՝ որ այս նոր մոտեցման:

Վասնզի Գարեգին Կաթողիկոս կուգաէշմիածնեն, որոն ամենաճոխ ձեռագրատունն եղավ իր աշխատանոցը:

Վասնզի Գարեգին Կաթողիկոս եղավ Հայաստանի հողին վրա ապրող ու գրող բանասեր մը: Երբ ան կուսումնասիրե նաղակիյանց կամ Պոռշյանց, Օրբելյանց, Վաշուտյանց և Ազիզբեկնեց նախարարական տուններու պատմությունը և կամ գրչության կամ մանրանկարչության կեդրոն եղող վանքի մը կամ քաղաքի մը արդյունքները, անիկա լիովին ծանոթ է անոնց վայրին և ներկա նյութական մնացորդներուն (շենք, ավերակ, արձանագրություն և այլն): Աստեղ իր բանասիրական աշխատություններուն տրամ գետինք: Տեղագրական ծշտությունը և միշավայրի լավատեղյակ ծանոթությունը իր գործը գրած են անսասան ժայռի վրա:

Մեծ է հողին բարիքը իր բանասիրական արդյունքի մեջ:

Ասով մանավանդ անիկա մեծապես կտարբերի մեր բանասերներեն, հատկապես արեմբառայ բանասերներեն:

Իր բանասիրական վաստակին մեծ ու դրական հատկանիշներեն մեկն է նաև իր վիտակից խուսափումը վեճերե, կասկածներե և իրար հրող ու իրարու հակասող կարծիքներե: Իր աղբյուրներու պատությունն ու

1. Արտատպատամ թերթի «Արարատ» օրաթերթից:
ԽՄԲ.:

նորությունը, իր վստահ ծանոթությունը անձերուն ու շարժումներուն դործած միջավայրին, զինք հեռու պահած են էջերով կասկածներ, դիմագրածություններ և կրկնություններ ճապաղելել:

Արդյո՞ւնքը այս բոլոր առավելություններուն՝ իրմեն հասած ո՞ւրեք գործ շահ մըն է մեր պատմության և մշակույթի անդաստաններուն համար:

Գարեգին Կաթողիկոսի հետազոտությանց գիմավոր առարկաները եղան հայ նախարարական տուներու պատմությունը, հայ գրչությունը և մանրանկարչությունը: Ասոնցմեն զատ անհիկա, գիմավորաբար իր սկզբնական շրջանին, զբաղեցավ բանահյուսական հավաքումներով («Սասմա ծոեր», 1892, «Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից», 1892, «Թուստամ Զայ», 1905) և ուսումնասիրելով ցարդ գրեթե անհայտ մատենագիրներ կամ անոնց նորահայտ գործերը («Միսիրար Սասենցի», 1899, «Խոսրովիլի Թարգմանիչ և երկասիրություններին», 1903, «Թումա Մեծոփեցու կյանքը», 1914, «Միսիրար Այրիվանեցի», 1931):

Իր ամենեն նշանակալից գործերը սակայն նվիրվեցան հայ նախարարական տուներու և հայ գրչության ու մանրանկարչության պատմության:

Անիկա, շնորհիվ ձեռադրական հիշատակարաններու և վիմագրական արձանագրություններու նորաբեր աեղեկությանց, առաջինը եղավ որ իր ուշադրությունը դարձուց հայ նախարարական նոր տուներու վրա, որոնք սկսան երևան դալ ԺԱ դարեն սկսյալ և գործեցին մինչև Ժ—Ժ դար: Իր այդ կարգի աշխատությանց մեջ կարևորագույնն է «ԽԱՂԲԱԿՅԱՆՔ ԿԱՄ ՊՈՇՅԱՆՔ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵջ» եռահատոր ուսումնասիրությունը: Նույն շարքին ունի Վաշուայն իշխանության և Ազիգիբեկինց վրա պակելի փոքր տարողությամբ ուսումնասիրություններ: Իսկ դժբախտաբար անավարտ կմնա տարիները ի վեր իր ծրագրած մեծ ուսումնասիրությունը Օրբելյան մեծ իշխանության վրա:

Իր այս շարքի ուսումնասիրություններով Գարեգին Կաթողիկոս կրցավ լեցնել հայոց պատմության մեջ մնացած կարևոր բաց մը — ԺԱ—Ժ դարերու Հայաստանի պատմությունը, որ մինչև այն ատեն իբրև խավար կամ դատարկ շրջան մը կներկայացնար: Գարեգին Կաթողիկոսի այս շարքի ուսումնասիրությունները փաստեցին թե թագրատունյաց թագավորության անկումնեն ետք,

Հայաստան ամայության ու անգործության վայր մը չէ եղած, այլ ունեցած է կազմակերպած իշխանություններ (որոնցմեն Զաքարյանները, Բագրատունիներե ավելի զորավոր և անոնց շափ շինարար և արդյունարար եղած են) քաղաքակրթական ու շինարարական բունքն թափ, մատենագրական ու գրչագրական իրագործումներ:

Բայց Գարեգին Կաթողիկոսի մեծագույն վաստակը և իր հիշատակը անմահության տանը նաև առաջակույն պիտի ըլլան իր այն ուսումնասիրությունները, որոնք նվիրված են հայ գրչության և մանրանկարչության պատմության:

Ինչ որ անմահն Կոմիտաս ըրավ հայ հրաժշտության և Թորոս Թորամանյան՝ հայ ճարտարապետության համար, անմահն Գաւեզին Կարողիկոս նոյնը կատարեց հայ գրչության և մանրանկարչության արվեստուները (Գարեգին Կաթողիկոս) և մեր մատենագրությունը:

Հայ հանճարի հավիտենական չորս սահմատմները են՝ մեր երգը, (Կոմիտաս), մեր եարտարապետության համար, անմահն Գաւեզին Կարողիկոս նոյնը կատարեց հայ գրչության և մանրանկարչության արվեստուները (Գարեգին Կաթողիկոս) և մեր մատենագրությունը:

Գարեգին Կաթողիկոս հայ գրչության և մանրանկարչության վրա գրեց ու տպեց հետեւալ ուսումնասիրությունները, ՀՀաշվելով հայ պարբերական մատուիլ մեջ հրատարակած իր բազմաթիվ ուսումնասիրությունները:

1. Գրչության արվեստը հին հայոց մեջ, մասն Գ (= Քարտեղ հայ հնագույթյան), Էջմիածին, 1913: Դժբախտաբար այս մեծ ու կարեւոր գործի Ա և Բ հատորները ցարդ անտիպ կմնան, վասնզի Վեհափառ Հայրապետը տարիներով անդադար նյութ հավաքեց այդ մեծ գործին համար, ու անընդհատ աճող նյութերը զինք մղեցին կատարելագործելու իր գործը: Որքան գիտենք, կատարելագործման համար հավաքված նոր ու բազմաթիվ նյութերը չկրցան մտնել ձեռագիր իր այդ աշխատության մեջ: Բայց գործի էության լավածանոթ ուսումնասիրող մը կրնա զանոնք հյուսել այդ մեծ գործի մեջ:

2. Մի էջ հայ արվեստի և մշակույթի պատմությունից, Հալեպ, 1930:

3. Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության, պրակ Ա, Բ, Գ և Ծ (Ծ-ը մամուկի տակ):

4. Հիշատակարան ձեռագրաց, բաղկացած բազմաթիվ մեծագիր հատորներե. 1951 թվին լույս տեսավ առաջին հատորը մեր աշխատակցությամբ: Մենք չորս հատորներ նախատեսեցինք գործի ամբողջության համար.

բայց անցնող այս վեց ամիսներուն, երբ սկսանք երկրորդի խմբագրման ու տպագրության աշխատանքներուն, նկատեցինք որ այս գործի ամբողջությունը պիտի գրավե լրսին շատ ավելի հատորներ:

Վեհափառ Հայրապետի «Հիշատակարանք ձեռագրաց» գործի անհաշվելի նորություններ կապարունակե հայոց պատմության, մատենակարության և մշակույթի ուսումնասիրության համար, բայց անիկա առավելապես կպարունակե շատ թանգագին նյութեր հայ գրչության և մանրանկարչության պատմությանց ուսումնասիրության համար, տրված ըլլալով, որ այդ հիշատակարանները գրված են ձեռագրի գրության և նկարազարդման առիթով, և բնական է, որ ամենեն առաջ անոնք պիտի պարունակեն տեղեկություններ ձեռագրի գրչին, եկարդին, գրուրյան վայրի, բվականի, պատվիրատովի (ստացողի), նյութին և այլ մանրանասնությանց մասին:

Մենք վերը հիշեցինք Վեհափառ Գարեգին Կաթողիկոսի տպագրված գործերուն կարևորագույնները: Յարդ իր տպագրված գործերուն և հոդվածներուն գործի լիակատար ցուցակը կարելի է տեսնել իր մեջութեր և ուսումնասիրություններ» գործի Բ պրակի վերջորության:

Սակայն այժմ, Վեհափառ Գարեգին Կաթողիկոսի մահվան վաղորդայնին մեր բովանդակ ուշագրությունը կեղունացնելու ենք անոր անարդիանուն վրա, որոնք կարենոր քանակ մը կներկայացնեն: Այդ անտիպներուն մեջ կան անավարտ և ծրագրային գործեր, կան գործեր, որ բոլորովին ավարտած են, իսկ կան գործեր, որոնք կրնան լավապես լուսավորվել և հրատարակվել:

Վեհափառ Հայրապետի բանասիրական ամենեն մնայուն աշխատանքները պահված են իր անարդիանուն մեջ, որոնք պետք ունին գուգուրանքի և գիտակից վերաբերումի: Պետք է հուսալ, որ Կիլիկիո Աթոռը և երանաշնորհ Հայրապետի հիշատակամները պիտի գիտնան այդ անտիպներու հրատարակությունը իրագործել ի ՓԱՌՍ ՀԱՅ ՄԾԱԿՈՒՅԹԻ:

Վեհափառ Գարեգին Կաթողիկոսի 60 տարիներու հոգնության մեծագույն մասը պարփակված է իր անտիպներուն մեջ: Ի մոտ հավանաբար պատրաստվի անոնց ցուցակը, բայց մենք այժմ հիշողությամբ կոտանք անոնց մոտավոր ամբողջությունը.

1. Հիշատակարանք ձեռագրաց, երկրորդ հատորը մամուկի տակ, իսկ մնացյալը անտիպի:

2. Նյութեր և ուսումնասիրություններ հայ մանր արվեստի մեացորդների, պրակի Դ (ընդ մամլով):

3. Ստեփան Սյունեցիի Մեկնութիւն շրից աւետարանշաց և Մեկնութիւն Եզեկիէլի (ընդ մամլով):

4. Գր. Մագիստրոսի բլբերը:

5. Երգեկայի մանրանկարչական դպրոցը (ընդ մամլով):

6. Հատակուորք Որոգինէսի, Հիպալիտայ, Յովիսան Ուկերեանի:

7. Քարտեզ հայ մանրանկարչության, շքեղ ու փառավոր ալբոմ մը, որուն տպագրությունը կկարոտի 30.000 դոլարի: Մեկնասության խոստում եղած է այս հատորի համար:

8. Օրբելյանց իշխանության պատմություն (ծրագրային վիճակի մեջ մնացած):

9. Վիմական արձանագրությանց նոխ հավաքումներ (դասավորելի):

Վեհափառ Գարեգին Կաթողիկոսի բանասիրական վաստակին ֆանակն ու որակը, մեթոդին գիտականությունը, անոր գործերուն անփոխարինելի արժեքը հայոց պատմության, մատենագրության ու մշակույթի ուսումնասիրության համար, ինչպես նաև այժմ լուսաբնակ Հայրապետի հայրենասեր և ժողովրդանվեր նվիրաբերումը պիտի պարտադրեն երկյուղած, հավասարիմ ու գիտակից վերաբերում զեպի իր անտիպ գործերը:

Հավերժական փա՛ռ Լուսավորչի կանթեղին մեծ տեսանող անմահ Գարեգին Կաթողիկոսին:

